«ԱՂԲԻՒՐԻ» ՅԱՒԵԼՒԱԾ

ՏԱՐԱԶԸ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՇԱԲԱԹԸ ՄԻ ԱՆԳԱՄ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ
ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ

№ 28 Կիրակի 25 յուլիսի | Զորրորդ տարի 1893

ԲԱՑԻՍԾ Է «**ԱՂԲԻՒՐԻ**» ԵՒ «**ՏԱՐԱԶԻ**» 1893 թ. 2-ՐԴ ԿԻՍԱՄԵԱԿԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ.

Նոր բաժանորդներից հետևեալ ընծաները կըստանան միայն նրանք, որոնք ամբողջ տարուայ «ԱՂԲԻՒՐԻՆ» և կէս տարուայ «ՏԱՐԱԶԻՆ» միասին են գրուում։

ԲԱՐԳՐԱԳՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ

Տուած յանուն Վեհափառ Պատրիարք և Կաթողիկոս Մկրտչի

ԱՍՏՈՒԾՈՅ ՕԹԱՆԴԱԿԱՊ ՇՆՈՐՀԻՒ

ՄԵՆՔ, ԱՂԷՔՍԱՆԴՐ ԵՐՐՈՐԴ,

ԿԱՅՍՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԱՅ,

Մոսկուայի, Կիեւի, Վլադիմիրի, Նովգորոդի. թագաւոր Ղազանի, թագաւոր Աստրախանի, թագաւոր Լեհաստանի, թագաւոր Սիբիրիայի, թագաւոր Տաւրիկեան Խերսոնէսի։ Թագաւոր Վրաստանի. արքայ Պսկովի և Մեծ Իշխան Սմոլենսկի, Լիտուայի, Վոլընի, Պոդոլիայի և Ֆինլանդիայի. Իշխան Էստլիանդիայի, Լիֆլիանդիայի, Կուրլիանդիայի և Սեմիգալիայի, Սամոգիտի, Բելոստոկի, Կարելի, Տուերի, Իւգորի, Պերմի, Վեատկայի, Բոլղարիայի և այլ երկրաց. արքայ և Մեծ Իշխան Նովգորոդի ստորին մասի, Չերնիգովի, Ռեազանի, Պոլոցկի, Ռոստովի, Եարոսլաւլի, Բելոզերի, Ուդորի, Օրդորի, Կոնդիի, Վիտեպսկի, Մստիսլաւի և բոլանդակ հիւսիսային երկրի Տէր. և արքայ Իւերիայի, Քարթալինիայի և Կաբարդեան հողերի և Հայոց երկրի, Չերքէզ և Լեռնական Իշխանների և այլոց. արքայ Թուրքեստանի. ժառանգ Նորւեգիայի, Դուքս Շլեզվիգ—Հոլշտէյնի, Ստորմարնի, Դիտմարսենի և Օլդենբուրգի և այլն և այլն։

Յայտնի լինի բովանդակ Հայոց ազգին, որ տնտալով նրա միահամուռ ցանկութեան, որ հանդիսաւոր կերպով յայտնուած է Էջմիածնում, 1892 թուի մայիսի 5-րդ օրը, Մենք հաստատում ենք Հայ-լուսաւորչական արքեպիսկոպոս Մկրտչին Էջմիածնի պատրիարք և կաթողիկոս ամենայն Հայոց։ Աղօթում ենք առ Բարձրեալն որ օրհնէ վեհափառ պատրիարքին ի մեծ սպասաւորութիւն Աստուծոյն յօգուտ և ի հոգեկան փրկութիւն բովանդակ Մեզ սիրելի Հայկական ազգի։

Տուեալ Մեր արքայանիստ ս. Պետրոսի քաղաքում, յամի փրկչական հազար ութ հարիւր իննսուն և երրորդ, յունիսի 3, իսկ մեր թագաւորութեան տասն և երրորդ։

Խնդրանքի վրայ նորին Կայսերական Մեծութեան յատուկ ձեռամբ գրուած է

«ԱՂԷՔՍԱՆԴՐ»

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ

Տված յանուն սրբազնագոյն պատրիարք և կաթողիկոս Էջմիածնի Մկրտչի

—

Սրբազնագոյն պատրիարք և կաթողիկոս Էջմիածնի Մկրտիչ։

Ձեր բազմամեայ հոգևոր ասպարէզը գրաւել է դէպի Ձեր սրբութեան անձը Հայոց ազգի հաւատարմութիւնը, որ ընտրել է Ձեզ այժմ Ս. Գրիգորի, Հայաստանի Լուսաւորչի գահը բազմելու։

Տեսնելով Ձեր հովուապետական գործունէութեան մէջ գրաւական Հայոց եկեղեցւոյ Մեր սրբոտին այնքան մօտիկ բարօրութեան և նրա զաւակների հոգևոր բարգաւաճման, ամենաողորմածաբար շնորհում եմ Ձեզ, վեղարի վրայ կրելու համար ադամանդեայ խաչ, հաւատի այս սրբազան նշանը, որ ոգևորում է թէ հովիւներին և թէ նրանց հօտը։

Յանձնելով Ինձ Ձեր աղօթքներին, մնամ միշտ դէպի Ձեզ բարեհաճ։

Խականի վրայ նորին Կայսերական Մեծութեան յատուկ ձեռամբ գրուած է

«ԱԼԷՔՍԱՆԴՐ»

Ի ՊԵՏԵՐՀՈՊ
10-ին յունիսի 1893 թ.

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ

Էջմիածնի բարձրագոյն պատրիարք և ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտչին.

Ի նշան Մեր ուշադրութեան առ Հայոց Լուսաւորչական եկեղեցին և արտայայտութիւն Մեր առանձին բարեհաճութեան յատուկ առ Ձեզ, Ամենաողորմածաբար դասեցինք Մենք ձեզ բարեպաշտ Մեծ իշխան ս. Ալէքսանդր Նեւսցու Մեր Կայսերական տապետութեան կարգը, որի նշանները սրա հետ ուղարկում ենք, մնալով դէպի Ձեզ Մեր Կայսերական բարեհաճ ողորմածութեամբ։

Խականի վրայ տառագրուած է նորին Կայսերական Մեծութեան սեփական ձեռքով

«ԱԼԷՔՍԱՆԴՐ»

ՊԵՏԵՐՀՈՊ
6-ն յունիսի 1893 թ.

ՀՐՈՎԱՐՏԱԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՒԱԾ Է

«Հայրիկը հաստատուած է, հաստատուած է», տարածուեց սրանից մէկ ամիս առաջ ամբողջ Հայութեան մէջ և ամենքիս սրտերը բերկրութեամբ լցուեցին, երբ պատարագի մէջ առաջին անգամ լիշուեց Վեհափառի անունը։

Երկար կեանք վեհ Ծերունուն, երջանիկ կաթողիկոսութիւն համայն Հայի Հայրապետին...

Բայց այն ուրախութեան լիութեան համար մէկ բան էր պակաս—պաշտօնական լրագիրների մէջ դեռ չէր յայտարարուած Խրիմեանի հաստատութիւնը, չէր հրատարակուած հրովարտակը։

Այսօր մեր ուրախութեան այդ պակասորդն էլ լրանում է, վաւերացման հրովարտակը հնչեցնում է—«Յայտնի լինի բովանդակ Հայոց ազգին թէ՝ անսալով նրա միահամուռ ցանկութեան, հաստատում ենք Մկրտիչ արքեպիսկոպոսին Պատրիարք Էջմիածնի և Կաթողիկոս Ամենայն Հայոց»։

Եւ միաժամանակ յայտարարւում են Բարձրագոյն երկու ուրիշ հրովարտակներ—«Վեհափառին շնորհուած է ս. Ալէքսանդր Նեւսցու տապետութեան կարգը և ադամանդեայ խաչը վեղարի վրայ կրելու համար»։

Սակայն այն զգացմունքի մէջ, որով այս բոպէիս լցուած է մեր սիրտը, միայն շոյուած ազգային ինքնասիրութիւնը չէ, որ տիրում է. ո՛չ, մեր ըզգացածի մէջ աւելի վեհութիւն կայ։

Կայսերական հրովարտակը Հայրիկի «հայրապետական գործունէութեան մէջ մի գրաւական է տեսնում Հայոց եկեղեցու բարօրութեան»։

Հայրիկը, որ ստիպուած նստած էր Երուսաղէմում՝ զրկուած գործելու կարողութիւնից, վերջապէս հրապարակապէս յայտարարւում է իբրև եկեղեցու բարօրութեան և նրա զաւակների հոգևոր բարգաւաճման նուիրուած մի մարդ. մթթէ այդ բարւոյ յաղթանակ չէ։

Բարւոյ յաղթութեան, ազնիւ անպարտութեան վրայ ունեցած հաւատի յաղթուրդն է, որ քաղցր է անում հայերիս ներկայ ուրախութիւնը։

Եւ թող այդ հզօր հաւատը անսասան առաջնորդէ մեզ հաղարաւոր դժբախտութիւնների մէջ, ինչպէս նա առաջնորդել է միշտ այն մեծ մարդուն, որը բազմելու է այժմ Լուսաւորչի գահի վրայ։

ՓԷՐԷՋԷ

Պատմութիւն Մաուրուս Եոկայի.

«Der Ferédje»· Erzählung von Maurus Jokai

—

Փէրէջէն մի ծածկոց է, որ տաճիկ կանայք պէտք է փողոցում կրեն։ Նա լայն, մինչև գետին հասնող մի կտոր է, որ կնոջ մարմինը ամբողջովին ոտից մինչև գլուխ ծածկում է. թևքերը մինչև մատների ծայրերին են հասնում և ձեռնոցների գործածութիւնը իզուր են համարում։ Փերէջէն չրպէտք է ապրեշումից կարած լինի, ոչ

էլ թափանցիկ, մարմնին կպչող շորից, նա պէտք է շինած լինի կոշտ, ուռուցիկ կտորից, որ կնոջ մարմնի ձևից ոչ մէկը չըցոյց տայ։ Եաշմակը, երեսը ծածկող այդ ծածկոցը, շորի ամբողջացնող մասն է կազմում. սրա մէջ աչքերի համար կան երկու ծակեր։ Այդպիսով աչքերը ազատ են մնում, ուստի և այդ հագուստի գովելի նպատակը անհետանում է։ Այդ չըծածկուած զոյգ աչքերը կարող են մարդկանց սրտերում աւելի մեծ վնասներ առաջացնել, քան եթէ ամենաբարձր կայսերական Հատիշերիփը կանանց պատուիրած լինէր ամբողջ մարմինը բաց պահել, իսկ դրա փոխարէն աչքերին կանաչ ակնոցներ կրել։

Փէրէջէն տիրող շոր է դարձել ոչ նորաձևութեան թերթերի, ոչ էլ կանանց դերձակների կամ եօթներորդ մեծ պետութեան (իսկապէս միակ) այն է՝ կանանց ճաշակի, այլ մի Հատիշարիփի շընորհիւ, որ սուլթան Մահմուդը իր սեփական աննմանելի ստորագրութեամբ թուգրայով հաստատել է։

Փէրէջէն մի շարժուն բանտ է, որ կանայք ստիպուած են միշտ կրել։

—

Մի օր բոսպանչիները գտան Ռաղիբ փաշայի Բոսփորի մօտ գտնուած պալատի այգու դրան առաջ մի գեղեցիկ, երիտասարդ մարդու դիակ։ Նա ձախ կողքին ունէր դաշոյնի երկու հարուածներ, մէկը ոչ խոր էր և ոչ մահացու, կարծես այդ հարուածը տուել էր մի թոյլ և անվարժ ձեռք, բայց միւսը մինչև սիրտն էր խոցուել։ Դա էր երիտասարդին մահ պատճառել։ Բացի այդ, նրա պարանոցի ձախ կողմին նկատելի էր ատամների մի խոր վերք, որ առաջացած էր մինչև կեանքի երակը ներս մտած ամբողջ երկկարգ ատամներով կծելուց։ Ատամների այդ կարգում ոչ մէկ պակաս տեղ չըկար։

Սպանուածի գօտու մէջ դեռ ցցուած մնում էին նրա՝ թանգագին, փղոսկրեայ, արծաթակալ կոթերով ատրճանակները, նրա՝ ոսկեայ և պերոզի պատեանով դաշոյնը, նրա դուրբանի փաթթոցի մէջ մնում էր ապրեշումեայ քսակը քսանհինգ ոսկիներով և մատներին մատանիքը։ Նրան սպանողը կողոպտող ձեռք չէր եղել։

Սպանուածը Աշնուման Այան էր, մեծ վեզիր Ռաշիբ փաշայի որդին, տաճկական jeunesse dovée-ի սիրելին։

—

Երեք օր շարունակ Ստամբուլի ամեն կողմերում՝ Բոսփորի ափերում, աղբիւրների առաջ, Հին մեյդանում, օտարների խաներում յայտնում էին ամբողջ ժողովրդին թմբուկների և զուռնայի ձայնով —ով որ Աշնուման Այանի սպանողին գտնի, կամ նրան բռնի, մեծ վիզիրից տասը քսակ ոսկի և ամեն վտանգի դէմ ապահովութիւն կըստանայ։

Իսկ այն ժամանակ մի քսակը հազար ղրուշ էր և տաճկական ղրուշը երեք ֆրանկ արժէք ունէր։ Մի խօսքով իրաւի որ մեծ վարձատրութիւն։ Բայց աւելի նշանաւորն էր խոստման երկրորդ մասը. ամեն վտանգի դէմ ապահովութիւն։

Աշնուման Այանին մի մարդ չէր կարող սպանել։ Նա ջղոտ, կռիւներում ամրացած տղայ էր, գօտեմարտութեան մէջ միշտ յաղթող։ Պարանոցի խածոցն էլ էր ապացուցանում, որ սպանողները երկուսը պէտք է լինէին։

Եւ երբ երկու մարդիկ մի գաղտնիք գիտեն, մէկը կարող է մատնել։

Երբ այդ երկու անձինք իրար նայեն, կարող է իւրաքանչիւրը մտածել. «եթէ այդ միւս գլուխը իր աչքերը ծածկի, այդ ինձ տասը հազար ղուրուշ կըբերի»։

Հարցը նրանումն է՝ երկուսից ո՞րն աւելի շուտով պէտք է աչքերը ծածկի, նրանից ո՞րն աւելի շուտով կըյոգնի միւսին իր աչքի առաջ տեսնելուց։ Ով որ արթուն մնայ, նա կըմատնի ննջողին։ Նա այդպիսով տասը հազար ղուրուշ կըվաստակի և իր գլուխը։

Սպանողին որոնողները միայն մի բան չէին մտածում, որ կան դէպքեր՝ երբ երկու անձինք իսկապէս երկուս չեն։ Երբ մարդ և կին են, նրանք ոչ թէ երկու անձինք են, այլ մի զոյգ։

Թմբուկը պատռեց, զուռնան ճաքեց, մունետիկը կանչելուց խռպոտ դարձաւ, բայց ոչ ոք չերևաց, որ երիտասարդ Աշնուման Այանի արեան գինը վաստակէր։

—

Կ. Պոլսի «եօթը աշտարակների» (եդիկուլէ) թաղը հայերի ընտրեալ բնակատեղին է։ Հռչակաւոր եօթը աշտարակներից այժմ միայն չորսն են կանգուն—երեքը սոսկալի երկրաշարժը գետին է գլորել. այդ չորս բարձր աշտարակների երկնակապուտ ներկուած գմբեթները փայլում են հեռուից իրիկնալուսնում, մի մասը վառուած կարմիր գոյնով, միւս մասը նմանուելով աստղալից երկնքին։

Նրանց մօտ կանգնած է համեստ և աննկատելի կերպով հայոց եկեղեցին առանց գմբեթի, ներսից և դրսից ներկուած մի շինութիւն և եկեղեցուն կպած է «սպիտակ հոգևորականի» հոյակապ տունը, փայտից շինած տների մէջ միակ հաստատուն քարէ տունը։

Հոգևորականի բնակարանի մուքի առաջ գըտնըւում էր մի ցած կամարաձև անցք, մի դռնակ, մի նախասենեակ կամ խուց, և դրանց ետևում նկատելի էր երկաթեայ վանդակատունը: Անցքի երկու կողքերը ծածկւած էին այլաբանական նըկարներով: Ձախ կողմում երևում էր քաւարանի հրդեհը. կարմրալեզու սատանաներ փչում են հուրը մի վիթխարի պղնձեայ կաթսայի տակ, և նրա մէջ ընդհանուր հրով այրւում են դատապարտւած մեղաւորների ողորմելի մարմինները — ժլատներ, մարդասպաններ, հարբեցողներ, իւրաքանչիւրի ձեռին իր յանցանքի նշանակը, և նրանց գեղեցիկ կանայք հերարձակ, որոնց յանցանքը իրանց գեղեցկութիւնն է. իսկ վերևում, ամպերի միջից, որ առաջանում է դժոխքի գոլորշիներից, նայում էր այդ չարչարւողների վրան ոսկի լուսապսակ սուրբ Բարսեղի գլուխը:

Գաւթի աջ կողմում նկատելի էր այդ պատկերը ամբողջացնող հակատիպը: Այնտեղ մի ճոխ սեղանի նստած էր երանիներների դասը, որոնք արժանացել են երկնքին, իսկ ամենքի գլխին պատւաբեր տեղը բռնում է ինքը Ս. Բարսեղը: Թևաւորւած հրեշտակներ պատւաւոր հիւրերին խորտիկներ էին առաջարկում արծաթեայ ամաններից, իսկ մեծ քնար ածող Ս. Դաւիթը համեմում էր երկնային ճաշի փառահեղութիւնը իր երաժշտութեամբ:

Հայ հերձւածողները (նրանց մէջ կան նաև կաթոլիկներ, բայց թւով քիչ և ենթարկւած են միւսների հալածանքներին *) հաւատում են, որ միայն նրանք են այն զարհուրելի քաւարանի կրակի մէջ ընկնում, որոնք իրանց մեղքերը չեն խոստովանել և եկեղեցու թողութիւնը ստացել, իսկ նրանք, որոնք երկրիս վրայ երկնային արդարադատութեան հետ հաշտւել են, հասնում են ուղղակի և առանց խոչընդոտի արքայութեան, որը, ինչպէս այդ գաւթի նկարը ցոյց էր տալիս, ոչնչով ետ չէ մնում Մահմեդի արքայութիւնից:

Եւ այս դաւանական կարծիքը ոչ միայն հաւատացեալներին է երջանկացնում, այլ օգնում է նաև հօտի հովին: Հայկական եկեղեցին ոչ մի աշխարհական ստացւածք չունի. եկեղեցական կալւածքներ, ուրար (stola), տասանորդ նա չի ճանաչում, նրա եկամուտի միակ աղբիւրը հաւատացողների ջերմեռանդութիւնն է: Նրանց գլխաւոր պատրիարքի, Արարատ լեռի վրայ նստող կաթուղիկոսի բոլոր եկամուտը կազմում է այն քառասուն փութ ցորենը, որ վճարում են հաւատացեալները Էջմիածնի վանքում ամեն եօթը տարին մի անգամ եփւող սուրբ իւղի համար և ապա քահանաների ձեռնադրութեան վարձը: Այս վարձը միւս քրիստոնէական աշխարհում «Սիմոնականութիւն» կանւանէին, բայց Արարատի Սուրբերի համար նրանք միայն իւղի ճրագն են: Երբ մի քահանայի տեղ ազատ է մնում, այն ժամանակ Էջմիածնի պատրիարքը «սև հոգևորականներին» հրաման է տալիս այդ տեղը բռնել, սև հոգևորականութիւնը ուղարկում է ընտրւած մարդաբօտին *): Սա պատւէր է տալիս իրան սասրադրեալ վանականին և վանականը նորընծային ուսման է վերցնում. նա մնում է քառասուն օր եկեղեցում փակւած, բացի ջրի մէջ եփած խոտերից, ուրիշ բան չի ուտում և միևնոյն ժամանակ սովորում է իր պաշտօնին վերաբերեալ գաղտնիքները: Այդ գաղտնիքները պէտք է անյայտ մնան աշխարհականներին, բայց սրանք նրանցից մէկից իմանում են, այն է՝ որ երբ քառասուն օրից յետոյ սպիտակ հոգևորականի համար ընտրւած քահանայի ձեռքը օծում են սուրբ իւղով և մաքուր բամբակով ծածկում, սա պարտաւորւում է սև հոգևորականին մի գումար վճարել, որի մի մասը պատրիարքին է հասնում: Այս գումարը նայած ծուխի դիրքին՝ կամ մեծ է լինում կամ փոքր:

Եօթը աշտարակների թաղի համայնքը ամեն ժամանակ ամենաօգտաւէտներից մէկն է համարւել, այնտեղ միշտ ապրել են հայոց ազգի ամենահարուստ մեծամեծները և մի սպիտակ հոգևորական, որ հասկանում է իր կոչումը, հաւաքում է անվերջանալի եկամուտներ, բայց ըստ այնմ էլ ծանրաբեռնւած է նա:

Մակարը համապատասխանում էր այդ կոչման: Նա բարեպաշտ անձ էր և սովորութիւն էր մըտցրել, որ ամեն տան մէջ սենեակները տարին երկու անգամ օրհնում էին, որպէս զի օրհնանքը նրանց վրայ մնար, որ պսակի ժամանակ երեք

*) Կաթոլիկ հեղինակի կարծիքն է:

Ս. Խմբ.

*) Ինադրում գրւած է «Mardabot», փոխանակ վարդապետի. մենք առանց փոփոխութեան թողնում ենք այդ սխալը, ինչպէս նաև միւս բոլոր սխալները, մեր հայրենակիցներին գաղափար տալու համար, թէ ինչպէս մինչև անգամ այն անձինք, որոնք եւրոպացի և եւրոպական կրթութիւն ունեցող հասարակութեան համար են գրում, կարող են իբր թէ գործին խիստ տեղեակ մարդիկ, այս տեսակ յիմարութիւններ գրել. ինչ որ այս հեղինակն է մեր եկեղեցու եկամուտների և այլն մասին գրում:

Ման. Թարգ.

ԳԻԻԻ-ԴԸ-ՄՈՊԱՍԱՆ

զանազան տեսակ ողորմութիւններ հաւաքւէր և թաղման ժամանակ մեռնողի բոլոր բարեկամները փոստի վճարքով միւս աշխարհը լուրեր ուղարկէին։

Նոյն իսկ Մակարի բնակարանի մուտքը յիշեցնում էր իւրաքանչիւրին իր պարտաւորութիւնը՝ մտածել իր հոգու համար։ Դժոխքի նկարը յիշեցնում է անցնողներին ինչ էր սպասում նրան, ով մեղքով ծանրաբեռնուած է, մինչդեռ երկնքի պատկերացումն ցոյց էր տալիս այն անձանց երջանկութիւնը, որոնք չէին խնայում իրանց հոգոյ փրկութեան համար քսակների բերանը բանալ։ Հասկանալի է, որ վարձի չափը համապատասխանում էր մեղքի մեծութեան և մեղաւորի կարողութեանը։ Փոքր մարդկանց մեծ մեղքն էլ փոքր էր, մինչդեռ մեծերի փոքրը մեծ, ըստ այնմ էլ վճռւում էր թողութիւնը։

—

Զորս աշտարակների երկնակայոյտ գմբեթներից անհետացել էր արդէն արեգակի վերջի ճառագայթների փայլը։ Փողոցի աղմուկը դադարում էր, ուղտապանների մտրակների ձայնը և ջրկիրների աղմուկը սկսում էր տեղի տալ շների խմբերին, որ գիշերը փողոցները լքցնում են, և օդի մէջ բարձրացած փոշին սկսեց ամպի ձևով իջնել. իբրև նշան վերահաս մթութեան,—երբ ջերմեռանդութեամբ հսկող Մակարը մի կնոջ ուրուագիծ նկատեց, որ ամենակարճ ժամանակում իր դրան առջև արդէն երեք անգամ անց ու դարձ էր արել, և նրա ձեռքին մի զոյգ ոտները կապած հաւեր։

Նա եկել էր խոստովանքի։ Աղքատ հաւատացեալները հաւեր են վճարում։ Երևի նա իր հոգու վրայ ծանրացած մեղք ունէր, որ մթութիւնն է ընտրել խոստովանքի համար և արդէն երեք անգամ անցել է վանդակի առջևով առանց վճռելու ներս մտնել։ Նա դէպի ներս էր նայում, դիտում էր դժոխքի պատկերը և զարհուրանքով կուչ գա-

լիս, կարծես նրա համար դեռ աւելի զարհուրելի պատիժ կայ քան դժոխքը իր բոլոր հրավէժ մեծութեամբ։

Կինը յենուած էր մի փայտի վրայ և կաղում էր, ուրեմն կաղլիկ էր. նրա աչքերի մէկի վրայ լհեմ կար, ասել է կէս կոյր էր, նրա երեսը ծածկուած էր կարմրուկի կարմիր բծերով. ասել է տգեղ էր, նրա շորերը պատառոտած էին, ասել է աղքատ էր։

Նա չորրորդ անգամ մօտենում է խորհրդաւոր խրատատուին, երբ նրա ձեռքի աքաղաղներից մէկը, որի գլուխը քաշ էր ընկած, սկսեց կանչել։ Առաքեալի զգուշացնողը բարձրացրեց իր ձայնը։ Կինը ինքն իրան զօռեց, ներս մտաւ և ծեծեց վանդակի դուռը։ Նրան ներս թողին։

(Կշարունակուի)

Մ ի՞ թ է . . .

—

Մի՞թէ պիտի շուտով թօշնին
Վարդ ու շուշան խնկաբոյր,
Անդորր լռեն թռչունների
Վառ մեղեդին,
Ակն-աղբիւր։

—

Մի՞թէ պիտի, չքնաղ ընկեր,
Կեանքի անուշ յոյզերից
Կուրծքդ հանգչի—լուռ դադարիս
Սառն ու անկեանք
Շիրմի տակ։
Մի՞թէ պիտի փոշի դառնան
Այդ աչերդ կենսավառ,
Ուր շողում են յոյս ու տենչեր,
Սիրոյ աստղեր,
Ինձ համար։

—

Մի՞թէ պիտի վառ ժպիտդ
Եւ արցունքիդ ծիածան,
Ինչպէս երազ, անդարձ մարին
Խոնաւ հողում
Յաւիտեան։

—

Օ՛, ի՞նչ—մի՞թէ. մի՞թէ, հոգեակ,
Պիտի անհետ մոռացւիս,
Ցիւնի շերտեր վրադ դիզւեն
Փոշիդ տանի
Ցուրտ քամին։

Ղալաբադալա. Ս. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ՖԵԼԻԵՏՕՆ

ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Իգդիրի կեանքից)

Ալաշկերտից նոր գաղթականներ։ Տաճկահպատակ քիւրդերի ասպատակութիւնները։ Իգդիրի ընտրողական իրաւունքը։ Քահանայական խնդիր։ Կարս-Մուրզա։

—

Իգդիրը իբրև գաւառական կենդրոն աննշան տեղ չէ բռնում մեր միւս գաւառական կենդրոնների մէջ և շատ անգամ գաւառական հայ ժողովրդի կեանքով հետաքրքրւողը այդ հայաշատ աւանում այնպիսի երևոյթների է հանդիպում, որոնք նրա վրայ մեծ տպաւորութիւն են թողնում։

Այդպիսի խորին տպաւորութիւն անող երևոյթներից մէկն է հայ գաղթականութիւնը Տաճկա-Հայաստանից դէպի Ռուսաստան, որի մասին հատ ու կտոր լուրեր արդէն տպուած են մեր թերթերում։ Դէպի Սուրմալու եկած գաղթականների թիւը հասնում է մօտ 40 ընտանիքի. սրանք սկզբում տարածուել են սահմանագլխի մօտիկ Գիւլլիջայ և Մոլլաղամար գիւղերում և ապա մասամբ Իգդիր են մտել։ Հաւաստացնողներ կան, որ գաղթականութեան մի այլ և աւելի մեծ հատուած դէպի Կարսի նահանգն է դիմել. նոյն իսկ Սուրմալուի գաղթականները դէպի Կարս գնացին մօտ օրերս։ Գաղթել են Տաճկաստանի Սարիբեղ գիւղից համարեա բոլոր բնակիչները. սրանց նեղողը եղել է մի քիւրդ չէյխ, որը, չընայելով ժողովրդին հասցրած իր հարստահարութիւններին, այնուամենայնիւ այն շրջանի դայմադամ է կարգուած. գաղթել են Բեօփըլան, Մանկասար, Դըլր, Ջիրօխլու, Եոնջալու և այլ գիւղերից։ Ընդհանուր թիւը մեզ յայտնի չէ։ Մօտ օրերս դարձեալ մի քանի տուն հասել են Գիւլլիջայ, սրանք էլ անշուշտ Կարս կերթան։ Գաղթողներից շատերը կարողացել են իրանց անասուններն էլ անցկացնել բերել, ոմանք մինչև իսկ ոչխարների հօտերը, բայց և ոմանք հազիւ տան կահ-կարասիքն են բերել թողնելով արտերը ցանած, խոտատեղերն ամբողջ։ Ծանր է ողորմելիների վիճակը. շատերը ստիպուած են մուրացկանութեամբ ապրել. մարդու սիրտը ճմլւում է, երբ տեսնում է նորատի, ամօթխած կանայք, մերկ երեխաների ձեռքից բռնած դռնէ դուռ թափառելիս։ Հաւժկու տղամարդիկ, որոնց հարուստ օրգանիզմը ամբողջապէս ոյժ է արտայայտում, աշխատանքի սովոր այդ իսկական մշակները ձեռներն այսօր ծալել են և մնացել օրուայ հացի կարօտ։ Իգդիրի մաքսատունը դրանցից շատերի ապրանքը կալանաւորեց որպէս կոնտրաբանտ և խեղճերը իրանց անասունները, որ այժմ իրանց միակ յոյսն է, վաճառումից ազատելու համար ստիպուած եղան որոշ գումար դրաւ թողնել մինչև կառավարութեան առանձին տնօրինութիւնը դրանց հարկատու ընդունելու։

Այս գաղթականութեան բուն պատճառները բազմաթիւ են և բազմատեսակ և ընդհանուր բառերով կարելի է այսպէս արտայայտել՝ «այդ մարդիկ զրկուած են եղել կ ե ա ն ք ի և գ ո յ ք ի ապահովութիւնից»։ Սակայն

ամենքիս էլ յայտնի է, որ չատ վաղուց Տաճկաստանում այդ ազատութիւնը բացակայ է, բայց այնտեղի հայ ժողովուրդը մինչև այժմ կրել է բոլորը և չէ դաղթել. մի նոր և աւելի ծանրակշիռ հանդամանք կայ, որ անկարելի է դարձնում այնտեղ կեանքը, և թշառները ստիպւած թողնում են հօրանց դերեզմանները և հայրենի երկիրը և սոված ու ատանդական այստեղ են փախչում։ Բանն այն է, որ սահմանագլխի ռուսաց մուսիւլման քրդերը անցեալ տարւանից սկսած ամբողջ էլիաթներով և ստածւածքով սահմանն են անցնում և դիմում Տաճկաստան. այս տարի այդ դաղթական հոսանքը չատ աւելի մեծ ծաւալ է ընդունել, որովհետև Տաճկաստանի նշանաւոր չէյխերը և բէդերը անդադար սրանց հրաւէր են կարդում թողնել Ռուսաստանը։ Այս գործում նշանաւոր դեր է խաղում վերջին ռուս-տաճկական պատերազմի ժամանակ յայտնի եղած գեներալ Զաֆար աղայի որդի Այիբ աղան, որ պատերազմի ժամանակ Տէր-Ղուկասեանի բանակը ձգելով իր հրոսակներով սահմանն անցաւ, Տաճկաստանում փաչայութիւն ստացաւ։ Ահա դլխաւորը սա է, որ հրաւիրում է մուսիւլման քիւրդերին դիմել դէպի Իսլամի տէրութիւնը։ Միւս կողմից դաղթող քիւրդերին սատիկ դրաւում է Տաճկաստանում տիրող անտէրութիւնը, հայ գիւղացիների հաշւով ապրելու և ազատ, համարձակ ասպատակութիւն անելու կարելիութիւնը։ Հէնց այս խոստումներով էլ դրաւում են սրանց հրաւիրողները։ Ինչ ասել կուզի, որ տաճիկները սրանց ընդունում են դրկաբաց և մեծ մասամբ տեղաւորում հայ գիւղերում։ Խլում են հայերի լաւ տները, լաւ խոտատեղերը, լաւ արօտները, արտերը յօդուտ քիւրդերի, և խեղճ հայ գիւղացիք ստիպւած են լինում զաւակների ձեռքից բռնած անցնել Ռուսաստան բախտ որոնելու համար։

Ականատեսների ասելով այժմ հայ գիւղերում կոն և առևտուրով զբաղող քիւրդեր. սոսկալի է սրանց առևտուրի եղանակը, քիւրդը չէ գրում (ինչպէս գրի) ապրանքի չափը և դինը, երբ մէկ հային ապրանք է տալիս, նրա համար հետաքրքրական են միայն տանողի անունը և գիւղի անունը, մնացածը հեչ է, այնուհետև տարիների ընթացքում մուշտարին դառնում է նրա կըթի կովը, այլ ևս վճարելով չի աղատւում։ Մնում է այս դէպքումն էլ գլուխ առնել, կորչել։ Եւ որ ամենից գըլխաւորն է, կառավարութիւնը չի աշխատում դաղթականութեան առաջն առնել. ինչպէս երևում է հէնց դա է նրա ցանկալի նպատակը և դրա համար են Ռուսաստանի քիւրդերը՝ հրաւիրւում։ Տաճիկ կառավարութիւնը աշխատում է իր հայաբնակ դաւառները իրապէս ևս Քիւրդիստան դարձնել, ինչպէս նա պաշտօնապէս անւանում է Ալաշկերտը, Մուշը, Վանը և այլն։

—

Տաճկաստանի սահմանագլխի քրդերի ասպատակները այլ ևս բուն Տաճկաստանով չեն սահմանափակւում. դարձեան սկսելով դրանց հրոսակների արշաւանքներին ենթարկւել են և Ռուսաստանի սահմանները և այն՝ բազմաթիւ կէտերում։ Հրոսակների յանդգնութիւնն այն աստիճանի է հասել, որ վերջերս քչեցին տարան Մարքլու գիւղի (Թուրքերի) ոչխարների հօտերը. այդ գիւղը Իգդիրից 5 վերստի վրայ է։ Աւազակներից աւարը խլելու համար տեղացի բնակիչներին օգնութեան հասան երեք զաղախ. արիւնահեղ ընդհարում տեղի ունեցաւ, որ սակայն ոչինչ հետևանք չը ցոյց տուեց բացի այն, որ մէկ զաղախ է սպանուել։ Աւարառուները կարողացան աւարով հանդերձ ճողոպրել։

Այդպիսի մի յարձակում է գործւել և եզիդիների Էլաղասի Հասան աղայի օբայի և վրանի վրայ. յարձակողների ցանկութիւնն է եղել, ինչպէս ասում են, սպանել իրանց ատելի ցեղի—եզիդիների այդ պետին, քանի որ եզիդիների և մուսիւլման քիւրդերի մէջ կրօնական դարաւոր ատելութիւն կայ և դրանք այդ պատճառաւ իրար խնայել չըգիտեն։ Հասան աղան ստիպւած է եղել խոյս տալ վրանից։

Ռուս-սահմանագլխի ուրիշ քիւրդ և հայ գիւղերից չատերի հօտերը տարւած են, ինչպէս և իդդիրցոց այն հօտերը, որոնք սահմանների մօտ էին արածում քիւրդերի (եզիդի) հսկողութեան ներքոյ։

—

Բուն Իգդիրի հասարակական կեանքի մէջ քանի մի փոփոխութիւններ են տեղի ունեցել, որոնց վրայ արժէ ուշք դարձնել։

Տարիներից ի վեր այս գիւղում իշխում են երկու նշանաւոր և մի քանի աննշան կուսակցութիւններ, որոնց ձեռքին է եղել փոխ առ փոխ հասարակական բոլոր գործերի ղեկը յանձին այս կամ այն կողմից ընտրւած գլուխի և չինական դատաւորների. սրանց ընտրութեան շուրջն է կատարւել և կուսակցական զուտ արևելեան պայքարը։ Ժողովրդի մնացած մասը այս կուսակցութեանց՝ մէկի կամ միւսի հետ չահերով և խաթրով ու թասիրով կապւած հլու հետևող է հանդիսացել այս երկու զօրեղ գործօններին և նոյնպէս պառակտւել։ Այս դրութիւնը տարիների ընթացքում երկու մեծ բանակների մէջ մշակել է կուսակցական յոյզերով լի բնաւորութիւն, որը և չարունակ կտակւել է եռնորդներին։ Երկու կողմերն էլ որչափ վնասներ կրեցին իրարից, որքան գործեր կատարեցան, որ չըպիտի կատարւէին, և որչափ գործեր անկատար մնացին, որոնք պիտի անպատճառ կատարւէին։ Երկու կուսակցութիւններից մէկն ու մէկին առաւելութիւն տալու կամ դատապարտելու յաւակնութիւնից հեռու լինելով՝ և բուն ժողովրդի, ամբոխի չահերն աչքի առաջ ունենալով՝ դեռ անցեալ տարի մենք պարտք համարեցինք մեր խօսքն ասել հրապարակօրէն «Մշակի» միջոցով։ Մենք ասում էինք որ «կուսակցական կռիւներից զերծ մնալու և հասարակաց կեանքը բարոյապէս չը քայքայելու համար՝ անհրաժեշտ է դըլաւայ ընտրել մի կողմնակի անձ, որ հեռու լինի կուսակցական ձգտումներից և աշխատի համերաշխութիւն ստեղծել, ժողովրդի անտարբեր մասի համար անհրաժեշտ է մի փոքր աւելի ինքնուրոյն գործունէութիւն. անհրաժեշտ է ձեռք վեր առնել կուսակցութիւններից և այլն։» Բայց որովհետև անցեալ ամառ գլուխայական ընտրութեան ժամանակ երկու կուսակցութեանց մէջ կռիւ ծագեց, որ վերջացաւ ընտրելիներից մէկի ՝վիրաւորելով, որովհետև այդպիսով չըկարողացաւ ոչ գլուխայի և ոչ չինական դատաւորների ընտրութիւնը, այդ պատճառով կառավարութիւնն արժան է դտել զրկել Իգդիրու հասարակութիւնը (7 գիւղ) ընտրողական իրաւունքից, իր

կողմից և ըստ իր հայեցողութեան նշանակել գլաւայ (правит. старшина) 300 ռ. ռոճկով և չինական դատաւորներ մի հարիւրական ռուբլի ռոճկով։ Գլաւան յունադաւան կողբեցի է, իսկ չինական դատաւորներից երկուսը Իգդիրցի հայ ծերունիներ են և երրորդը արհաշեցի Թուրք։

Այս հետևանքը զարմանալի չի, քանի որ Իգդիրը անընդունակ եղաւ ընտրել իր միջից մի բարեխիղճ կառավարիչ։

—

Իգդիրի Սամւէլ քահանայ Սողոմոնեանց քանի տարի է, ինչ վարում է գաւառիս գործակալութեան պաշտօնը։ Այս տարի Իգդիրցի բազմաթիւ բողոքաւորների բողոքի հիման վրայ՝ հոգ. իշխանութեան կողմից գործակալը քննութեան է ենթարկուած. քննիչ է նշանակւել Բլուրի Սիօնի քահանայ Տէր-Մանուէլեանց։ Գործակալը մեղադրւում է իր պաշտօնի և քահանայական կոչման դէմ... գործած բազմաթիւ զանցառութիւնների մէջ։ Ասում են, որ քննիչը խիստ բարեխիղճ և անաչառ է եղել քննութեան ժամանակ։ Գործն ինչպէս երևում է, շատ բարդ է, հարց ու փորձի ենթարկւել են հարիւրաւոր անձինք, քննութեանց արդիւնքն ուղարկուած է հոգ. իշխանութեանը, սպասում են նրա տնօրինութեանը։ Ի դէպ է ասել մի քանի խօսք.—Տարիների ընթացքում հոգ. իշխանութեան կատարած քննութիւնները այս կամ այն զանցառու պաշտօնեայի վերաբերմամբ մնացել են առանց հետևանքի, իբրև մեռեալ տառ, և յանցաւորը քաջալերուած՝ յաղթական կերպով շարունակել է իր պախարակելի ընթացքը ի քաջալերութիւն իր նմանների։ Այս ճշմարտութիւնը տարիների ընթացքում մեր ժողովրդի մէջ մի առած է դառել։

«Հոգևոր իշխանութեան գործ է, մ ի կ ե ր պ կըվերջանայ էլի»—այս նախադասութիւնից բուն արևելքի հոտ է բուրում։ Տեսնենք՝ այս դէպքումն էլ կըհաստատուէ՞ ժողովրդի այդ կարծիքը։

—

Պ. Կարա-Մուրզան Իգդիրումն էր, նա արդէն երգեցիկ խումբ է պատրաստել յուլիսի 31-ին կոնցերտ տալու համար, վարժութիւնը յանձնել է մի քանի օրով իր աշակերտներից մինին, իսկ ինքը գնացել Ալէքսանդրապոլ այնտեղ ևս խումբ կազմելու։ Իգդիրի երգեցիկ խումբը կազմուած է 80 հոգի երկսեռ անդամներից։ Գործը համարեա աջողուած է։ Այս մարդը ուղղակի հրաշքներ է կատարում, ո՞վ կարող էր հաւատալ, որ Իգդիրի պէս մի տեղում կարելի էր այդպիսի կարճ միջոցում մի բաւական յաջող խումբ կազմակերպել 80 հոգուց։ Կարա-Մուրզան գեղարւեստի զաւակ է, բնութեան մէջ հնչող ամեն մի ձայն նրա լսողութիւնից չի խուսափում և նա շարունակ դրանց մէջ ներդաշնակութիւն է փնտրում. չափազանցութիւն չի լինել ասել, որ նա բարկանում, վրդովւում է, երբ ճանճերն անգամ աններդաշնակ են բզզում։ Եւ ո՛րչափ է նուիրուած իր գործին։

ԿՌԱՆ

ԳԻՒԻ-ԴԸ-ՄՈՊԱՍԱՆ

—

Լրագիրներից արդէն յայտնի է նշանաւոր ֆրանսիական վիպասանի՝ Մոպասանի մահը, որին համեմատում էին Զոլայի, Ֆլոբերի և սրանց նման երևելիների հետ։ Մոպասանը ծնուել է 1850 թւին և կրթութիւն է ստացել Պարիզում։ Վերջին ֆրանս-գերմանական պատերազմում մասնակցեց նա որպէս հասարակ զինուոր, իսկ պատերազմը վերջանալուց յետոյ նուիրեց գրականութեանը, կամենալով գոնէ այս ասպարէզում որ և է մխիթարութիւն գտնել։

Նրա ոտանաւորների առաջին ժողովածուն աջողութիւն չունեցաւ։ Փոքր յետոյ նա հրատարակեց մէկ պիես «Հին ժամանակի պատմութիւն» վերնագրով, իսկ այնուհետև Զոլայի հրատարակած ժողովածուի մէջ զետեղւեց նրա «Ճարպի կուճը»։ Իսկ սկսելով 1881 թւից Մոպասանը սկսեց ինքը հրատարակել մի շարք ժողովածուներ։ Այդ միջոցին լոյս տեսան նրա «Մի կեանք» և ապա «Բարի բարեկամ» ռոմանները, որոնք նրա անունը հռչակեցին ամեն տեղ։ Այնուհետև նա գրեց կրկին երեք խոշոր ռոմաններ, որոնցից ամենալաւն է «Մեր սիրտը»։

Մոպասանի աշխատութիւնների մեծ մասն աչքի է ընկնում չքեղ ոճով և նուրբ գեղարւեստական վերլուծութեամբ։ Նրա բոլոր հերոսները իրական մարդիկ են, որ ունեն անձնական պակասութիւններ և առաւելութիւններ։ Այդ խիստ ռէալականութեան մէջ պէտք է որոնել նրա գրչի էութիւնը։

Ցոյց տալու համար թէ որչափ համակրանքով էր վերաբերւում դէպի հանգուցեալ վիպագիրը ընթերցող հասարակութիւնը և գրողների դասակարգը, մէջ բերենք մի կտոր այն դամբանականից, որ ասաց մեր ժամանակի ամենամեծ վիպասան՝ Մոպասանի հայրենակից Էմիլ Զոլան։ «Նա միանգամից գրաւեց ընթերցող հասարակութեան սէրը և առաջնակարգ տեղ բռնեց։ Այնուհետև նա անդադար ստեղծագործում էր ճշմարիտ վարպետի հըմտութեամբ և ինքնավստահութեամբ։ Նրա զրոյցներին հետևեցին ռոմանները, որոնք արտացոլում էին նրա պարզ աշխարհահայեցողութիւնը, խաղաղ վերլուծութիւնը և մաքուր պարզասրտութիւնը։ Մոպասանին սիրեցին հէնց առաջին րոպէից, որովհետև նրա մէջ տեսնում էին ֆրանսիական ոգու էութիւնը և ազգի բոլոր վսեմ յատկութիւնները։ Նա թէև երբէք չէր աշխատում ներկայացնել իրան որպէս գրականական գործիչ, դիտմամբ նոյն իսկ խոյս էր տալիս գրականական խօսակցութիւններից, հեռու էր պահում իրան գրողների շրջաններից, բայց այս ըստ երևոյթին անտարբեր գրող-տաղանդը ջերմաջերմ սիրում էր իր գեղարւեստը, անդադար իրան կատարելագործում էր, իրան օրէցօր ուժեղացնում էր ճշմարտութիւնը ըմբռնելու համար»։ Այդպէս է ասում Էմիլ Զոլան... Տաղանդը միայն կարող է տաղանդին ճիշտ հասկանալ...

Ահա այդպէս Զոլան Մոպասանի մէջ գտնում է մի տեսակ ձգտում դէպի իդէալականը, ձգտում իրողութիւնների իմաստը ըմբռնելու։ Սակայն կան այնպիսի քննադատներ, որոնք բոլորովին հակառակ կարծիք են յայտնում։ Այսպէս Պելիսիէն, որ վերջերքս հրատարակում է մի քանի հետազօտութիւններ Ֆրանսիայի ներկայ դարի գրականութեան ուղղութիւնների և գլխաւոր ներկայացուցիչների մասին, պնդում է որ Մոպասանի իդէալը զուտ նիւթապաշտական էր և նա յոռետեսութիւնից դրդուած քարոզում էր էպիկուրէյիզմ, զուարճասիրութիւն, որովհետև կեանքի մէջ չկայ բաւականաչափ զգացող-

ЛИТ. К МЕСХИЕВА

Քիւրդ մանուկ.

կան զարմանք։ Բայց Պելիսիէի սխալ կարծիքը իրաւամբ հերքում է «Եւրոպական տեղեկատուն» ասելով.

«Հազիւ թէ Մոպասանը կարողանար այնպէս խոր, վճռատեսնող տպաւորութիւն անել ընթերցողի վրայ, եթէ նա զբաղուած լինէր բացառապէս նիւթական զգացումների աշխարհով։ Ցիշենք նրա փոքրիկ «Առանձնութիւն» վէպիկը, որ շատ բնորոշում է նրա հոգեկան կազմը։ Բարոյական առանձնութեան (մենակութեան) սարսափը, նոյն իսկ սիրող էակների մէջ ներքին կապի անհնարութիւնը—այդ բոլորի պարզ նկարագրութիւնը ցոյց է տալիս, որ Մոպասանի մէջ զօրեղ էր հոգեկան սկզբունքների կարօտը։ Պելիսէի մեղադրանքների դէմ նոյնպէս կարելի է բերել Մոպասանի յայտնի «Կեանք» ռոմանը, որտեղ հերոսուհին զոհւում է, որովհետև որոնում է կեանքի մէջ հոգեկան իդէալներ, բայց չի կարողանում գտնել։»

Մոպասանը վերջին տարիներս խելագարւած էր և այդ շատ բնական է։ Առաջինը չէ այդ անբախտութեան մէջ Մոպասանը և վերջինն էլ չի լինել։ Մարդկութեան ամենաազնիւ տաղանդները, օրգանական աշխարհի այդ ամենաբարձր էակները, որոնք իմաստ են որոնում կեանքի մէջ և իդէալ, շատ անգամ չեն գտնում կեանքի մէջ իրանց որոնածը... Նրանց սիրտը խոցւած է... Նրանց վրդովում է կիսաբաց վարդի թառամելը, նորաբոյս ծառի չորանալը... Բայց ոչքան աւելի վշտացնում է նրանց ինքը մարդը, այդ երևելի, բայց առ այժմ ողորմելի արարածը... Ով ունի նուրբ սիրտ և զգայուն ըմբռնողութիւններ, նա միշտ գտնւում է խելագարելու կամ խելագարման մօտենալու վտանգի մէջ։ Ի՞նչպէս կարելի է խլճալ աշխարհի տանջանքների վրայ... և «բոլորը» տեսնելով՝ քիչ թէ շատ «խելագարութեան» չմօտենալ...

Ս. Թ.

ՄԱՏԵՆԱԳՈՒԹԻՒՆ

ԿՐՊԷ. Պատկերներ կեանքից, Ա. արտատպած «Մեղու Հայաստանի» և «Նոր-Դար» լրագիրներից 1879—1891 թ. Ալէքսանդրապոլ, տպար. Գ. Սանոյեանցի, 1843. էջ 85, գինն է 20 կոպէկ։

Այդ գրքոյկը պարունակում է իր մէջ ութ մանրավէպ, որոնց նիւթը վերցրած է հայերի թէ ժամանակակից և թէ անցեալ կեանքից։ Ընդհանրապէս կարելի է ասել, որ հեղինակի լեզուն մատչելի ու պարզ է ու առհասարակ գրքոյկը փոքր ի շատէ հետաքրքրութիւն շարժում է։ Թէև աչքի ընկնող գեղարւեստ չկայ այդ պատկերների մէջ, բայց տեղ տեղ երևում է, որ հեղինակը նկարագրելու ընդունակութեան նշոյլներ ունի։

Այնուամենայնիւ Կրպէի գրքոյկի վրայ կարելի է նայել ոչ թէ գեղարւեստի, այլ գլխաւորապէս մտքի, զաղափարի տեսակէտից։ Նրանք մի տեսակ բարոյագիտական պատկերներ են, որոնց կարդալով ընթերցողը պիտի հասնէ հեղինակի ցանկացածայս ու այն եզրակացութեան։ Թէ ինչպիսի եզրափակութիւններ պիտի դուրս հանւեն, կերևայ պատկերների կարճառօտ բովանդակութիւնից։

«Մինչև որ...» պատկերը ամենայայտնիագոյնն է գրքոյկի մէջ։ Կրգնամ—ասում է անձնւէր երիտասարդը իր սիրուհուն—այնտեղ սպասում է ինձ ուխտակից ընկերներիս բազմութիւնը. այնտեղ հրաւիրում է ինձ մի այլ սէր... որի համար պէտք է զոհեմ ամենայն ինչ՝ մինչև որ, մինչև որ...»

«Հարստահարութեան զոհ»-ի մէջ մենք տեսնում ենք Տարօնի թշւառ հային, որ գանազան ճնշումներից ստիպւած դիմում է պանդխտութեան ինչ ինչ յոյսերով։ «Նա շարքով մուտ գործեց Կովկասի «Հիւրասէր» և մեծաշէն Տփխիս, Շուշի, Գանձակ և Երևան... Բայց ապարդի՞ւն... ողորմելի Տարօնցու վրայ ուշք դարձնող էլ չկար։ Տասնեակ տարիներ տառապում է նա կարօտ հայրենիքից, ապագայի յոյսերով ու վերջապէս՝ հանգչում է թշւառը Վաղարշապատի պատերի մօտ։ Որդին եկաւ հօրը որոնելու, բայց գերեզմանն էլ չգտաւ»։ Այո՛, սրտաշարժ է այդ պատկերը։

«Տգիտութեան զոհ» պատկերը նոյնպէս ազդող է։ Պատանի գիւղացի Կուռոն բնական ձիրքով օժտւած է. նա գեղեցիկ առասպելներ է արտադրում, սիրուն ոտանաւորներ է շարադրում. նա կարող կըլինէր ժամանակին վիպասան բանաստեղծ կամ մատենագիր դառնալ։ Նրան աջողւեց գրել ու կարդալ սովորել։ Կուռոյի յօրինած գողտրիկ երգերը տարածւեցան ամբողջ վիճակում, բայց հեղինակի անւանն ոչ ոք ծանօթ չէր, ոչ ոք չէր կարող հաւատալ, թէ այդ բոլորը մի գիւղական տղայի անմշակ մտքի արտադրութիւն կարող էր լինել... Բայց վերջապէս Կուռոյի ծնողները զօռով ամուսնացնում են նրան մէկ աղջկայ հետ, որին նա չէր սիրում։ «Հէնց այդ օրից Կուռոյի մէջ մեռաւ բանաստեղծական ձիրքն ու տաղանդը, այդ օրից էլ թունաւորւեցաւ նրա կեանքը, վիճակն ու բախտը»։

«Որդեսպանութիւն» պատկերը թէև համակրելի ձգտում ունի, բայց տիպական չէ հայերիս կեանքի մէջ։ Մէկ այրի, բայց ջահել և սիրուն կնոջ վրայ սիրահարւում է մէկ ապահով վիճակ ունեցող երիտասարդ։ Սակայն վերջինիս շրջապատողներին դուր չէ գալիս երիտասարդի մտադրութիւնը։ Ջահել այրին չըկամենալով անբախտացնել իր պատճառով երիտասարդին, թունաւորում է ինքն իրան։ Բայց երիտասարդը չըկամենալով

առանց իր Վարդուհուն կեանք ունենալ, նոյնպէս ինքնասպանութիւն է գործում։

«Սիւնեցի Հայրասլետը» և «Բարի Ճանապարհ» շաբլոնական գրուածքներ են. սրանց՝ նիւթն արդէն ծամծմուած և սպառուած է։ Մենք տեսնում ենք վաղուց ծանօթ քուրդերին, որոնք կողոպտում են, սպանում են հային, փախցնում են նրա աղջիկներին... բաւական է արդէն գանգատուելը, միջոցներ ցոյց տալու և գործադրելու ժամանակն է։

«Հայ էր նա» մի աւանդութիւն է։ Հեղինակը պատմում է, թէ ինչպէս մի ստիպմամբ մահմեդականացրած հայ փաշայ է դառած լինում և վերջապէս փախչելով իր կնոջից և երեխաներից, նորից հայանում է։ Նա ի հարկէ վատ բան չարաւ՝ մահմեդականութիւնից քրիստոնէութեան անցնելով, բայց արդեօք լաւ է որ նա անտէրութեան է մատնում իր հարազատ զաւակներին»։

Կրպէի ամենաանմիտ պատկերը «ծամանակակից սրիկան» է, որից փչում է զուտ մեղւականութեան հոտը։ Մի պարոն ամեն տեսակ սրիկայութիւններ, խարդախութիւններ, տմարդութիւններ անելուց յետոյ, վերջապէս «պատորի օգնական» է դառնում և միամիտ և անփորձ հայ-լուսաւորչական շինականների մէջ «Աստուծոյ խօսքը» քարոզում։ Ի՞նչ է կամենում դրանով ասել պարոն Կրպէն։ Գուցէ այն, թէ ամենաանբարոյական մարդկանց երբեմն պատորները կարողանում են Աստուծոյ խօսքը քարոզիչ դարձնել։ Միայն այդ չափից դուրս մեծ և անվայել սիւրպրիզ կըլիներ պատորների համար։ Բայց հաւանականն այն է, որ պ. Կրպէն կամենում է ցոյց տալ, թէ բողոքական պրոպագանդիստները խարդախ ու խաբեբայ սրիկաներ են։ Իսկ այդ արդէն զրպարտութիւն է, ստախօսութիւն է։ Բողոքական քարոզիչներին մենք շատ լաւ ենք ճանաչում, նրանք մոլեռանդ են, թերուս են, բթամիտ են, բայց ոչ երբէք սրիկայ, խարդախ և խաբեբայ։

Ս. ԹԱՌԱՑԵԱՆՑ

ԳԵՂԱՐԻԵՍՏ

—

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Հինգշաբթի, յուլիսի 21-ին արքունական թատրոնում կայացաւ յայտնի երգչուհի օրիորդ Պապայեանի, տենոր Շահլամեանի և բարիտոն Ամիրջանեանի վերջին կոնցերտը։ Վաղուց Թիֆլիսի թատրոնը ամառւայ շոքերին այնչափ հասարակութիւն չէր տեսել, որչափ այդ երեկոյ։ Ոչ միայն ամբողջ թատրոնն էր լի հանդիսականներով, այլև բոլոր անցքերը բռնուած էին, նոյն իսկ շատերը տեղ չըլինելու պատճառով մնացել էին թատրոնի կորրիդորում։ Բաւականաչափ հասարակութիւն, կանգնելու տեղ անգամ չըգտնելով, ստիպուած էր հեռանալ, զրկւելով երեկոյթի հաճոյքից։ Օր. Պապայեան այս անգամ ունեցաւ աւելի մեծ աջողութիւն, իր քաղցրահնչիւն ձայնի և անման երգեցողութեան շնորհով։ Ամեն մի երգից յետոյ հասարակութիւնը անվերջ ծափահարութիւններով վարձատրում էր հայ երգչուհուն, որ ստիպուած էր իւրաքանչիւր երգից յետոյ երգել ծրագրից դուրս մի ուրիշ երգ։ Երկրորդ երգից յետոյ թատրոնի օթեակներից սկսեցին տեղալ ծաղիկների անթիւ փնջեր, որ ծածկեցին ամբողջ բեմը։ Փնջիկներին հետևեց զոյն զոյն թղթի կտորների անձրև։ Այդ թերթիկների վրայ իտալերէն և հայերէն բառերով գրուած էր. «Կեցցէ Պապայեան»։ Տաղանդաւոր երգչուհին ստացաւ մի քանի թանգագին նուէրներ և մի ահագին փունջ, որ զարդարուած էր մի գեղեցիկ շալով։ Կոնցերտը վերջանալուց յետոյ ամբողջ հասարակութիւնը դեռ երկար ժամանակ ծափահարում էր համակրելի հայ «սոխակին» անթիւ անգամ հրաւիրելով բեմ։ Վերջապէս անընդհատ ծափահարութիւնները վերջացան և օրիորդը կարողացաւ կէս ժամից յետոյ դուրս գալ թատրոնից «կեցցէների և բրաւոների» ուղեկցութեամբ։ Այդ ժամանակ տեղում էր սաստիկ անձրև, որ խանգարեց պատրաստուած բենգալեան կրակը վառելուն և մնացեալ ցոյցերին։

Պ. պ. Շահլամեան և Ամիրջանեան նոյնպէս մեծ աջողութիւն ունեցան։ Թէ մէկը և թէ միւսը երգում էին առանձին ոգևորութեամբ։ Հասարակութիւնը առատօրէն վարձատրեց երկուսին էլ բազմաթիւ ծափահարութիւններով, տալով իւրաքանչիւրին մի մի թանգագին նուէր։ Պ. Ամիրջանեանն իր համակրելի ձայնով առանձին աջողութիւն ունեցաւ, մանաւանդ կոնցերտի երկրորդ բաժնում. իսկ պ. Շահլամեանի սքանչելի ձայնը մի առանձին գրաւչութեամբ էր հընչում։ Երեկոյթից յետոյ հասարակութեան մի մասը հայ երգչուհուն և երգիչներին պատուեց ընթրիքով «Լոնդոն» հիւրանոցում։

Շ.

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

—

Կ. Պոլսից մեր ստացած տեղեկութիւններից երևում է, որ կաթողիկոսական հրաւիրակները այնտեղ հասել են յուլիսի 3-ին «Աղէքսանդր Բ» ռուսական շոգենաւով։ Ճանապարհին ափ են դուրս եկել միայն Տրապիզոնում և Սամսոնում, որտեղ այցելել են տեղական առաջնորդարանները, առաջնում նաև գերեզմանատունը, իսկ երկրորդում՝ ուսումնարանը։ Պոլիս հրաւիրակներին ընդառաջ են եկել Պատրիարքի կողմից երկու վարդապետ և պատրիարքարանի մի երկու աշխարհական ծառայող, Երուսաղէմի փոխա-

Նորդի կողմից Գէորգ վարդապետ Երիցեան և Տ. Մկրեան քահանան։ Երկաթուղի նստելով նրանք գնացել են քաղաքից դուրս Պատրիարքի մօտ, որը հաղորդել է որ երկու սրբազանները իր մօտ պիտի հիւր մնան, իսկ Եփրեմ և Մեսրոպ աբեղաների համար սենեակներ են պատրաստել Երուսաղեմատանը, ուր նրանք հիւր են եղել Սիմէօն սրբազանին, Երուսաղէմի պատրիարքի փոխանորդին։ Հրաւիրակները, այցելել են ռուսաց դեսպանին, Մելքիսեդեկ Մուրադեան, Իզմիրլեան և Ալէաթճեան սրբազաններին, Մաքրուհեաց, Ներսիսեան և այլ ևս մի քանի վարժարաններին, Գալֆայեան որբանոցին, Ազգային հիւանդանոցին և այլն։ Պերայի եկեղեցում Արիստակէս Ս. Սեդրակեանը քարոզ է խօսել։ Յուլիսի 8-ին սրբազանները գործով տեսակցել են Եպարքոսի, դատական փաշայի օգնական Ջիվէր Բէյի և վերջապէս ոստիկանութեան նախարար Նազըմ Բէյի հետ։ Կաթողիկոսը կ'ուղևորւի Էջմիածին այն ճանապարհով, որով որ առաջ որոշուած էր։ Այն լուրը, իբր թէ Սուլթանը առաջարկել է Վեհ. Խրիմեանին Պոլսով անցնել՝ անհիմն է։ Երուսաղէմում վերջնականապէս պէտք է ընտրւի Վիեննա-Օդէսսա-Բաթում կամ Վիեննա-Գալացա-Բաթում ճանապարհը։ Ձայն կայ, որ Կ. Պոլսի Ազգային ժողովը պիտի իր կողմից մի կամ երկու հոգի ուղարկի Վեհափառի ընդունելութեան համար, բայց դեռ ոչինչ չէ վճռուած։ Պատրիարքը յայտնել է սրբազաններին թէ ինքը առաջադրել է նրանց Սուլթանի շքանշաններին։ Յուլիսի 9-ին, երբ հրաւիրակները ներկայ էին սելեմլիքի՝ հանդիսին, Սուլթանը նկատելով նրանց, առանձին մարդ է ուղարկել նրանց մօտ ողջունելու նրանց գալուստը։

—

Ներկայ թւի մայիսի 24-ին բարձրագոյն հրամանով փոփոխուած է Անդրկովկասի ազգաբնակութեան վերաբերեալ զինւորագրութեան օրէնքը։ Նոր օրէնքով նորակոչները պիտի ծառայեն, ինչպէս և ուրիշ ռուսահպատակները, հինգ տարի, և այն էլ կամ առանձին զօրագնդերում կամ Կովկասում և Անդրկովկասում գտնուած զօրքերում։

—

«Տարազի» № 26-ի մէջ հաղորդել էինք որ Թիֆլիսում արդէն բացւել են ուսուցչական ցենզ ձեռք բերելու կուրսեր։ Պարապմունքները վաղուց է որ սկսւել են և առաջ են ընթանում ըստ կարելւոյն արագ։ Բոլոր ուսուցիչները և ուսուցչուհիները բաժանուած են չորս խմբերի, որոնք և պարապում են առանձին։ Ցաւալի է որ այդ կուրսերից շտապել է օգուտ քաղել մեր ուսուցիչներից մէկ փոքրիկ մասը։ Եթէ թեմական տեսուչը յայտնած լինէր Թիֆլիսի թեմի բոլոր ուսումնարաններին մի առանձին շրջաբերականով մանրամասնութիւններ այդ դասընթացքների մասին, հաւաստի ենք որ շատ շատերը արդէն եկած կլինէին այստեղ և կըսկսէին պատրաստուել ցենզի համար, որ այսպէս թէ այնպէս անհրաժեշտ է մեր դպրոցների անընդհատ առաջադիմութեան համար։

—

Օրթաճալի բնակիչները խնդրամատոյց են եղել քաղաքագլխին, որ թոյլ տրւի նորից կառուցանելու «իչլի» ասուած ժամանակաւոր կամուրջը։

—

Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատար պ. Իզմայլեանը խնդրամատոյց է եղել նահանգապետին, որ նոր խորհուրդը հրաւիրւի սեպտեմբերին և այդ ամսին էլ ընտրւեն վարչութեան անդամները։ Այդ խնդիրքը նա առարկում է նրանով գլխաւորապէս, որ նոր ընտրուած իրաւասուներից մօտաւորապէս 30 հոգի ամառային շոգերի պատճառով թողել են քաղաքը, շատերը անգամ հեռացել են արտասահման և Թիֆլիսում այժմ ներկայ եղող իրաւասուների ժողովը մի գուցէ չըկարողանայ ճշտիւ արտայայտել ազգաբնակութեան կամքը։

—

Այս տարի ամառը Թիֆլիսում այնպէս շոգ չէ, ինչպէս անցեալ տարի էր։ Յունիսի և յուլիսի յաճախակի անձրևները զովացրին օդը։ Այս շաբթին հեղեղ տեղաց, որից քաղաքի հին աներից մէկ երկուսը փլւել են։ Մէկ հայ շանթահար է եղել։ Օդի քիմիական բաղադրութիւնների մէջ այս տարի նկատւում է աւելի քիչ ածխաթթուածին, քան թէ անցեալ տարի, խոլերայի ժամանակ։ Չընայելով բաւականի զով եղանակներին, Կուր գետի մէջ լողացողներ շատ են, օր չէ անցնում որ մէկ-երկու հոգի չըխեղդւի, որովհետև ժողովրդի համար կանոնաւոր լողարաններ չըկան շինուած։ Ինչպէս յայտնի է, Կուրի վրայ միակ լողարանը, որ պատկանում էր Վարդանեանին, այս գարնան վարարման ժամանակ ջուրը տարաւ։ Քաղաքային վարչութիւնը, որ մեծ ուշադրութիւն է դարձնում հարուստ դասակարգի համար յարմարութիւններ ստեղծելու վրայ, պէտք է որ վերջապէս մտածի և ռամիկ ազգաբնակութեան մասին, որ ամարանոցներ գնալ չըկարողանալով, ստիպուած է զովանալու Կուրի մէջ. քաղաքը ինքը պէտք է իր հաշւով շինի ժողովրդական լողարաններ։

—

Անցեալ համարի մէջ ցանկութիւն էինք յայտնել, որ այսուհետև արգելւի գօտեմարտութիւնը։ «Իտալիա» այգու տէրը դիմել էր նահանգապետին խնդրելով որ իրեն թոյլ տրւի գօտեմարտութիւն սարքել և այդ խնդրագրի առիթով նահանգապետը յայտարարել է, որ այսուհետև այլ ևս այդ զւարճութիւնը ոչ ոքի չի թոյլ տրւի։

—

Ինչպէս լսում ենք, Թիֆլիսում լաւ յայտնի պ. Յ. Թումեանցը յանձն է առել մի քանի անձանց հետ միասին պահել եկող ձմեռ Թիֆլիսում հայոց թատերական խումբ։ Այս օրերս Թիֆլիսի հայ դերասաններից մի քանիսն ուղևորւել են Շուշի պ. Աբէլեանի առաջնորդութեամբ։

—

Ճեմարանաւարտ երիտասարդներից այլ ևս մէկը՝ Բագրատ Վարդազարեանը կուսակրօնութիւն ընդունելու մտքով մտել է Էջմիածնի վանքը իբրև միաբան։ Երիտասարդը անցեալ տարի լրացրել էր իր ուսումը ճեմարանում և մէկ տարի ուսուցիչ էր Վլադիկաւկազի հայոց դպրոցում։

—

Պ. Մառը արդէն Անիումն է։ Մեզ հաղորդում են, որ յարգելի գիտնականը նոր պեղումների ժամանակ շատ հետաքրքրական իրեր է գտել, որոնք մեծ լոյս են սփռում Անիի անցեալի վրայ։

—

«Տարազի» մէջ հաղորդել էինք, որ գիւղատնտեսական ընկերութեան դահլիճում կարդացուած էր մի զեկուցում թէ դաշտային մկներին ոչնչացնելու համար ամենայարմարն է վարակել նրանց, Լեֆլերի առաջարկած եղանակով, հարինքային բացիլներով։

Այդ միջոցի գործադրութեան փորձերն արդէն արուած են և շատ աջող են անցել։

—

Վլադիկաւկազի երկաթուղու ընկերութեանը թոյլ է տրուած սկսել Եյսկի գծի հետախուզութիւնները։ Այդ գիծը պիտի միացնի Եյսկ քաղաքը Վլադիկաւկասի երկաթուղու ամենամերձաւոր կայարաններից մէկի հետ։

—

Վաղուց է՝ որ խօսւում է Բագուի և Բաթումի մէջ նաւթանցք չինելու մասին։ Ներկայումս հաղորդակցութեան նախարարութիւնը համարում է այդ գաղափարը նպատակայարմար, սակայն Անդրկովկասեան երկաթուղու վարչութիւնը պնդում է, որ աւելի լաւ է նաւթանցքի փոխարէն անցկացնել երկաթուղու երկրորդ գիծ։ Այդ միտքն աւելի չօշափելի անելու համար, երկաթուղու կառավարչապետը անձամբ գնացել է Պետերբուրգ։

—

«Կասպի» լրագրի ասելով, բագուեցիներից մի քանիսը մտադիր են դիմելու Անդրկովկասեան երկաթուղու վարչութեանը, խնդրելով որ այլ ևս մէկ մարդատար գնացք աւելացնի Բագու-Պանձակ գծի վրայ, մանաւանդ որ բագուեցիներից շատերը ամարանոց են գնում Հաջիքենդ։

—

Ֆինանսների նախարարը ուղարկել է Պարկաստան արտակարգ յանձնարարութեանց պաշտօնեայ Տամարային, որ այնտեղ ծանօթանայ ռուսաց առևտրի դրութեան հետ։ Միևնոյն ժամանակ հաղորդակցութեան նախարարութիւնը ուղարկում է ինժեներներ, որ Պարսկաստանի ճանապարհները ուսումնասիրեն և նրանց վերանորոգելու ծախսերը որոշեն։

—

Յունիսի վերջին Սալմաստից հեռագիր ստացուեց Թաւրիզ, որ քիւրդերը յարձակուել են Դէրիկի վանքի վրայ, բոլոր տաւարը տարել, չորանին սպանել և այնտեղ ապրող միակ ընտանիքին էլ կողոպտել։ Հեռագիրը ստանալուն պէս՝ Հայր Թաւաքալեանը ներկայացաւ տեղական կառավարութեան, ներկայացրեց ստացած հեռագիրը և գանգատուեց։ Հետևանքը եղաւ այն, որ կառավարութիւնը հեռագրեց Սալմաստի գաւառապետին և Խոյի նահանգապետին. մի հեռագիր էլ Հայր Սուրբը իր կողմից ուղարկեց նահանգապետին. թէ նահանգապետից և թէ գաւառապետից և յունիսի 24-ին ստացուեց հեռագիրների պատասխանը. առաջինը հեռագրում է որ՝ հրամայել է քննութիւն բաց անել և գործի մանրամասնութիւններն իրան տեղեկացնել, մինչդեռ երկրորդը, որ կաշառած է կաթողիկներից, հեռագրում է՝ «Չորանին սպանել են Դէրիկում ապրող հայ դաչաղները, իսկ տաւարներն էլ խրտնել փախել են»։ Ցայսնի չէ հետևանքը։

—

Յունիսի վերջերը տեղի ունեցաւ Թաւրիզում առաջնորդական նախապատրաստական ընտրութիւնը. մի կուսակցութիւն իր առաջին ընտրելի միաձայն առաջարկեց Արիստակէս եպ. Սեդրակեանին, միւսը՝ Աղւանեանին, երրորդը՝ չէզոքները, Բարդուղիմէոս վարդապետին։ Ընտրութիւնը ժողովրդական է։

—

Մայիսի 27-ին, երեկոյեան մթնով աւազակները Որմիում սպանել են Աբրահամ անունով մի հայի և ծանր վիրաւորել են ուրիշ մէկը՝ Արգար Տէր-Նայեան անունով։ Բողոքներ են ուղարկուած ուր որ հարկն է։ Թէհրանի ճանապարհի վրայ աւազակները ծանր վիրաւորել են Խաչատուր անունով մի հայի։

—

Ջուղայում, ինչպէս երևում է Թիֆլիսում ստացած հեռագիրներից, յուլիսի 16-ին, գիշերւայ 3 ժամին 42 րոպէ զգացուել է երկրաշարժ, որ երեք րոպէ է չարունակուել։ Մարդկանցից ոչ ոք չէ վնասուել։

—

Ռուսաց կառավարութիւնը, փոփոխելով իր մաքսային սիստեմը, յայտարարել էր որ Գերմանիայի վերաբերմամբ կը գործադրուի մինչև նոր առևտրական դաշնագրի կապելը՝ աւելացրած տարիֆ։ Այդ կարգադրութեանը գերմանական կառավարութիւնը պատասխանել է նրանով, որ 50% աւելացրել է այն մաքսերը, որ վերցնում էին Ռուսաստանի ապրանքներից։

Հէնց որ այդ յայտնի եղաւ Պետերբուրգում, ֆինանսների նախարարութիւնը վճռել է աւելացնել մաքսը նոյնպէս 50% Գերմանիայի հողի և գաղթատեղիների արդիւնքների վրայ։ Այդպիսով սկսել է «մաքսային պատերազմ» և ռուսաց արտաստմանեան լրագիրները ներկայումս բացառապէս զբաղուած են այդ հարցով և ինչպէս միշտ, այս անգամ ևս ազատամիտ լրագիրները ցանկութիւն են յայտնում, որ այդ «պատերազմը» չուտով դադարի, իսկ ետադէմները խրախուսում են ժողովուրդը և դրդում տակալ։

—

Վճռուած է ներկայ թուականի վերջերին բոլոր վակուֆային հողերը յանձնել պետական կալուածների կառավարութեանը։

—

Նիժնի Նովգորոդի ցուցահանդէսը, որ բացուած է յունիսի 15-ին, սանիտարական լաւ դրութեան մէջ է։ Այս անգամ աւելի անցեալ տարուանից շատերն են գնացել։

ՍՏԱՑԻԱԾ ԳՐՔԵՐ

—

Շնորհակալութեամբ ստացանք Թ. Հ. Հրատարակչական Ընկերութիւնից հետևեալ նոր գրքերը.

1. Հանրամատչելի բնախօսութիւն Վ. Լունկեվիչի։ Գիրքը կրում է «Հանրամատչելի գիտնական գրադարան» անունը, ունի 13 նկար, պարունակում է 362 փոքրադիր էջ, գինը 1 ռուբլի։ Տպագրուած է Թիֆլիսում՝ Մ. Ութինեանցի տպարանում, սոյն թուին։

Գրքի թարգմանութիւնը, որ ռուսերէն ձեռագրից կատարել է պ. Կ. Գիւլնազարեան, բաւական սահուն և հարթ է ու կարդացուում է հետաքրքրութեամբ։

2. Խարազի տղայ կամ երկու աղբրացեղ (հեքեաթ). այս ժողովրդագրական նիւթը վերածել է Գամալեանց Ս. գրական լեզուի։ Գիրքը մեծադիր է, ունի 98 էջ, որից 6 երեսը գաւառական բառերի բացատրութեան է նուիրած. գինը 40 կոպ.

է, տպագրուած է Շարաձէի տպարանում։

3. Էլգուջա, վէպ Ա. Մոչխուբարիձէի, վրացերէնից թարգմանեց Տ. Փիրումեանց. միջադիր է, ունի 176 էջ. գինը 45 կոպ. է, տպագրուած է Վրաց. Հրատ. Ընկ. տպարանում։

Որքան պ. Քամալեանցի «Խարագի տղան» մաքուր հայերէն լեզուով է և ժողովրդական բառերով հարուստ, նոյնքան պ. Փիրումեանցի թարգմանութիւնն անհարթ է և աղքատ բառերից։ Երկու գիրքն էլ լի են տպագրական անթիւ սխալներով։ Այս վերջին գրքի մասին կըտանք մի քննադատութիւն։

4. Փարաւոնի աղջիկը, Գ. Էբէրսի, թարգմանեց Շապիրի փոխադրածից Գ. Շահբուդաղեան։ Գիրքը միջադիր է, պարունակում է 339 էջ, տպագրուած է Շարաձէի տպարանում, գինը 80 կոպէկ է։

Հռչակաւոր Էբէրսի այս պատմական գեղեցիկ վէպը խորհուրդ ենք տալիս ձեռք բերելու մեր ընթերցողներին։

—

5. Դ-ր Արշակ Տէր-Միքէլեանից՝ իր աշխատասիրած Հայաստանեայց եկեղեցին և Բիւզանդեան ժողովոյ պարագայք. պատմական յառաջադիմութիւն։

Այս գիտնական ուսումնասիրութիւնը 1890 թւին արժանացել է Սահակ-Մեսրոպեան մրցանակին, տպագրուած է Մոսկւայում, Մ. Բարխուդարեանի տպարանում, 1892 թւին. մեծադիր է, ունի ԻԳ+226 էջ. գինը 1 ռ. 50 կոպ է։

6. Գ. Շահբուդաղեանից՝ Մարկ Տուէնից (Սամուէլ Կլէմէնս) թարգմանած Իշխանն ու աղքատը պատմական վէպը. տպագրուած է Մ. Վարդանեանի տպարանում, պարունակում է 300 մեծադիր էջ. գինը մէկ ռուբլի է։

7. Աբրահամ Յ. Այվազեանից իր գրած Շար հայ կենսագրութեանց. երեք հատոր, տպագրուած են Կ. Պոլիս, Գ. Պաղտատլեանի տպարանում, սոյն թւին։

Այս երեք հատոր երկասիրութիւնը նուիրուած է տասնեւօթ յայտնի և մեզ անյայտ գործիչների կենսագրութեանց։ Ռուսիայի գործիչներից կենսագրուած են Ալամդարեան, Աբովեան («Քանաքեռցի Խաչատուր») և Նալբանդեանց («Մ. Ղազարեան Պայտուրեանց»)։

Պ. Ա. Այվազեանի երկասիրութիւնը արժանացել է Սահակ-Մեսրոպեան կէս մրցանակին։ Առաջին և երկրորդ հատորներն արժեն իւրաքանչիւրն՝ 6 ղրուշ, երրորդը՝ 8 ղրուշ։

8. Հ. Գրիգորիս վ. Գալէմքեարեանից՝ Ազգային մատենադարան». Թ. Պատմութիւն Հայ լրագրութեան ի սկզբանէ մինչև մեր օրերը». հատոր Ա. մէկ լուսատիպ պատկերով։

Այս գովելի աշխատութիւնը պարունակում է՝ Ա. շրջանում՝ հայ լրագրութեան սկզբնաւորութիւնը 1794—1840 թ., երկրորդ շրջանում՝ 1840—1860։ Գիրքը գրուած է—ինչպէս մենք «Տարազում» գրել էինք, որ եկող թւին լրանում է հայ լրագրութեան հարիւրամեակը,— «առթիւ հարիւրամեայ յոբելեանի հայ լրագրութեան յամին 1894 հոկտեմբեր 16/28», որ հեղինակը նուիրում է հայ խմբագիրներին։

Յաջորդ մասը (1860—1894) հեղինակը խոստանում է մինչև յոբելեանի օրը հասցնել։ Տպագրուած է Վիեննա, Մխիթարեան տպարանում, արժէ 2 ֆր. 50 սանթիմ։

9. Ազգային մատենադարան. Ը. «Նորագոյն աղբիւրք Մովսէսի Խորենացւոյ», քննադատական ուսումնասիրութիւնք, գրեց Ա. Գարիէր, ուսուցչապետ յՈւս. Արեւել. կենդանի լեզուաց, ի Փարիզ։

Այս աշխատութիւնը մաս մաս տպագրւում էր «Հանդէս Ամսօրեայի» մէջ, այժմ առանձին գրքոյկով լոյս է ընծայւում Վիեննայի Մխիթարեան տպարանից Հ. Յ. Տ-ի թարգմանութեամբ։ Գինն է 1 ֆր.

Ժամանակ. Խմբագիր
Բժ. Գ. ԼԻՍԻՑԵԱՆ.

Հրատ. Տ. Նազարեան.

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Ր

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ՇԻՐՎԱՆԶԱԴԷԻ

ԱՐՍԷՆ ԴԻՄԱՔՍԵԱՆ

ՎԷՊԸ

Վաճառւում է հեղինակի մօտ. Тифлисъ, Ширванзадэ. Грибоѣдовская, д. № 7.

Գինն է ճանապարհածախսով 1 ռ. 50 կոպ.։ Գրավաճառներին զիջումով։

5—1

ԼԻՍ ԳԻՒՂՈՒՄ ԵԿԵՂԵՑԻ ՇԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԸՆՏՐՈՒԱԾ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ յայտնում է ի տեղեկութիւն հայ հասարակութեան, որ եկեղեցու պատերը արդէն կառուցուած են, բայց ծածկի համար կարեւորութիւն կայ օժանդակութեան։ Քաջ գիտենալով հայ ժողովրդի ջերմ պատրաստակամութիւնը դէպի եկեղեցիների շինութիւնը և պայծառութիւնը՝ յանձնաժողովը իր համար սրբազան պարտաւորութիւնն է համարում դիմել հայ բոլոր բարերարներին՝ խնդրելով չմոռանալ իրանց նուէրները և օգնութիւնը՝ վերջացնելու եկեղեցու շինութիւնը ի մխիթարութիւն Վրաստանի մէջ կղզիացած մի բուռն հայերի, որոնց նորամանուկները երբեմն մնում են դերեզման առանց մկրտութեան, երիտասարդ և կուսանք պսակւում են թոնդիրների վրայ և ննջեցեալները թաղւում են առանց հոգեհանգստեան արժանանալու՝ զուրկ ժամից ու պատարագից և երբեմն էլ առանց քահանայի։ Հասցէ. Тифлисъ, П. М. Катанянцъ.

3—1

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առեւտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առեւտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշւապահներ։ Աւարտողները ստանում են ատտեստատներ։

Աւանդելի առարկայք սոքա են՝ 1) Առեւտրական Տնտեսութիւն, 2) Առեւտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրայ, 5) Առեւտրական Թղթակցութիւն, 6) Առեւտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) Գեղագրութիւն։

Ուսումը սկսւելու է սեպտեմբերի 15-ից, ընդունելութիւնները սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Աղէքսանդր Փրիդօնօվի տանը, № 9 Սերգիէվսկայա և Նագորնայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ՁՐԻԱՊԷՍ եղբ. Տօվիանօվների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են կուրսերի հիմնողին.—въ Тифлисъ, С. П. Мануэльянцу. 12—2

ԿՈՎԿԱՍԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՎԱՐՉ. Պ. ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ԹՈՅԼՏՈՒՈՒԹԵԱՄԲ

Յուլիսի 5-ից բացւեցաւ Թիֆլիսում

Պ. Յ. ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆԻ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ եւ ՊԱՆՍԻՕՆ

Աշակերտներ ընդունւում են՝ գիշերօթիկ, ցերեկօթիկ և երթեւեկ, պատրաստելու պետական միջնակարգ բոլոր դպրոցները մտնելու համար։

Անհրաժեշտ տեղեկութիւններ և ծրագիրը կարելի է ստանալ ամեն օր առաւօտեան 8 ժամից մինչև 1 ժամը, և ճաշից յետոյ 5—8 ժամը։

Հասցէն. Թիֆլիս, Սոլոլակ, Վօզնեսենսկի փողոց, տուն Ճանշիեւի, № 18. 2—2

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Ներսիսեան Հոգեւոր դպրոցում աշակերտների ընդունելութիւնը կըսկսւի օգոստոսի 25-ին և կըշարունակւի մինչև սեպտեմբերի 1-ը։ Ցանկացողները պարտաւոր են իրանց խնդրագրի հետ միասին ներկայացնել ծննդեան և պատւաստի վկայականները. Թիֆլիզում բնակող անձինք պէտք է ներկայանան իրանց զաւակների հետ, իսկ օտարաքնակները պարտաւոր են ցոյց տալ Թիֆլիսում մի անձն, որ կարողանայ իբրև խնամակալ պատասխանատու լինել դպրոցի վարչութեան առաջ. ծնողներն և խնամակալները պարտաւոր են մինչև սեպտեմբերի 10 հոգալ աշակերտի ուսումնական պիտոյքը և հագցնել աշակերտին դպրոցական տարազի հագուստ։ Զքաւորները պարտաւոր են ներկայացնել վկայական։ Վատառողջները կ'ենթարկւին բժշկական քննութեան և, եթէ հարկաւոր համարւի, կըմերժւին։

2—2

ԶՄԻՒՌՆԻԱՅԻ երկսեռ վարժարանների համար ՏԵՍՉԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԻ է կոչւում մի համալսարանական։ Թղթակցել Յովհաննէս Տէր Միրաքեանցի հետ, որ Ուսում. Խորհրդի կողմից պայմանաւորւելու յանձնարարութիւն ունի։ Խնդրւում է ցանկացողներից տեղեկութիւն տալ իրանց ուսման միջնակարգ ու համալսարանական շրջանների մասին։

Հասցէ՝ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼ, Յովհաննէս Տէր-Միրաքեանցին։ 5—1

ՇՈՒՇԻԱՅ Ս. «ՄԱՐԻԱՄԵԱՆ» ՀԱՅ ՕՐԻՈՐԴԱԿԱՆ

երկսեռեան ուսումնարանի համար հրաւիրւում են ուսուցչուհիներ և ուսուցիչներ հետեւեալ առարկաներից, այսինքն՝ Հայոց լեզուից, Ռուսաց լեզուից, Թուաբանութիւնից, գծագրութիւնից, աշխարհագրութիւնից, երգեցողութիւնից, բնական պատմութիւնից և ձեռագործից։

Ցանկացողը պէտք է ունենան ուսուցչութեան վարելու իրաւունք (цензъ), կամ մտած լինեն Վեհափառ Կաթողիկոսից հաստատուած ընդհանուր ցուցակի մէջ։ Ցանկացողները թող բարեհաճեն գրաւոր խնդրով ներկայացնել ուսումնարանի վարչութեանը, մանրամասնօրէն յայտնելով իրանց ունեցած ուսումնական առարկայի մասին և այլ պայմանները. նոյնպէս հարկաւոր է ներկայացնել ուսման վկայականը և ծառայութեան ցուցակը ամենամօտիկ ժամանակում, որպէս-զի հնարաւոր լինի վերջացնել բոլոր պայմանները երկու կողմից էլ և հրաւիրած ուսուցիչը ներկայ լինի Շուշւում մինչև օգոստոսի 20-ը։

Поступили въ продажу слѣдующія книги:

Практическое руководство, чтобы правильно, вѣрно, со всѣми тонкостями играть безъ проигрыша въ шахматы, шашки, билліардъ, кегли, лото-триктракъ, домино, лапту, крокетъ и бирюльки. Составилъ С. Гавлактіоновъ, съ многими рисунками и чертежами, ц. 2 р. съ пересылкою — Новѣйшее практическое руководство выучиться правильно читать, писать и говорить на французскомъ языкѣ въ 6 мѣсяцевъ, по методѣ проф. Оллендорфа, съ ключемъ 2 част. ц. 3 р. съ пересылкою. — Новѣйшее практическое руководство выучиться правильно читать, писать и говорить на нѣмецкомъ языкѣ въ 6 мѣсяцевъ безъ помощи учителя, по методѣ

проф. Оллендорфа съ ключемъ, ц. 2 р. 50 к. — Радикальное излѣченіе глухоты и другихъ болѣзней уха, практическія совѣты и наставленія. Составилъ докторъ С. Поповъ, издан. 2-е, ц. 1 р. 50 к. съ пересылкою. — Лѣчебникъ болѣзней желудка, практическое руководство къ излѣченію всѣхъ болѣзней желудка, какъ-то: катарра глотки, языка, остраго и хроническаго катарра желудка, рака желудка и кишекъ, геморроя, грудной болѣзни, запора, поноса и проч. съ приложеніемъ рецептовъ, наставленій и предохраненія. Составилъ докторъ Н. Покровскій, изд. 2-е, ц. 2 р. съ пересылкою. — Возрожденіе организма, разслабленнаго любострадaніемъ или радикальное излѣченіе онанизма послѣдствій мужскаго безсилія и нервной слабости, съ прибавленіемъ въ особомъ приложеніи гигіены половыхъ частей. Составилъ докторъ Ю. Ритаръ, ц. 2 р. — Жизнь супружеская, исторія мужчины и женщины въ семейной жизни, ихъ отношенія физическія и нравственныя. Составилъ докторъ А. Браунъ, ц. 2 р. — Картины послѣдствій разврата или разрушительное вліяніе природы на людей, придающихся любострастію, настольная книга для врачей и воспитателей, содержащая въ себѣ анатомію и физіологію половыхъ органовъ, описаніе мужскаго безсилія и женскаго безплодія, поллюцій или ночныхъ истеченій сѣмени, слабости сѣмянниковъ гонорея, венерическія болѣзни и тайныхъ причинъ онанизма, съ показаніемъ способовъ лѣченія этихъ болѣзней. Составилъ докторъ Р. Ламертъ, съ 12-ю картинами, ц. 2 р. — Излѣченіе постояннаго запора и гемороидальныхъ болѣзней посредствомъ врачебной гимнастики. Составилъ докторъ Клевенталь, ц. 1 р. 50 коп. съ пересылкой. — Подарокъ молодымъ хозяйкамъ, легкій способъ приготовлять вкусный и дешевый домашній столъ, необходимая экономія въ каждомъ хозяйствѣ. Составила В Петрова, ц. 1 р. 50 к. съ пересылкою. — Ревматизмъ и ломота практическое руководство къ излѣченію ревматизма остраго, сочленовнаго, хроническаго, сочленовнаго и мышечнаго, ломоты или подагры, англійской болѣзни, ушибовъ, остраго гнойнаго воспаленія, водянки, сочленія, бѣлой опухлой, сочленій и прочихъ ревматическихъ болѣзней, происхожденіе, причины, теченіе, распознованіе и лѣченіе этихъ болѣзней. Составилъ докторъ Покровскій, ц. 1 р. 50 к. — Онанизмъ, причины его и вредное вліяніе на здоровье, средства предотвратить, ослабить и уничтожить дурныя послѣдствія, происходящія отъ этого порока и его лѣченіе. Составилъ докторъ Н. Соколовъ, ц. 1 р. 50 к. съ пересылкой. — Лѣчебникъ всѣхъ болѣзней, половыхъ органовъ, подъ названіемъ: „опытный врачъ секретныхъ болѣзней", настольная книга для молодыхъ людей, общепонятное практическое руководство къ излѣченію венерической болѣзни, онанизма, безплодія мужчинъ и женщинъ, безсилія и прочихъ болѣзней половыхъ органовъ, полное изученіе вышесказанныхъ болѣзней, безъ помощи врача всѣми способами врачеванія въ 3-хъ частяхъ съ атласомъ рисунковъ, съ многими рецептами, издан. 4-е исправленное. Составили доктора Покровскій и Новиковъ, ц. 2 р. — Безошибочныя карты гаданія по брюсовской системѣ и книга фортуны знаменитаго профессора Свиденборга, въ роскошной сюрпризной коробкѣ, ц. 2 р. съ перес. — Тайны руки, искусство узнавать жизнь, характеръ и будущность каждаго, посредствомъ простаго изслѣдованія руки, съ рисунками. Составилъ Дебебароль, ц. 2 р. 50 коп. — Школа секретныхъ болѣзней, настольная книга для мужчинъ, практическое руководство къ распознанію и лѣченію всѣхъ венерическихъ болѣзней, внутреннихъ, наружныхъ и накожныхъ болѣзней, безсилія, онанизма и прочихъ болѣзней половыхъ органовъ Составилъ докторъ М. Сабуровъ, изданіе 2-е, ц. 1 руб. 50 к. съ пересылкой. — Брачныя удовольствія — практическія врачебныя наставленія вступившимъ въ бракъ, опытный руководитель для всѣхъ желающихъ пріятно, счастливо и весело проводить время семейной жизни, сохранить половую способность до глубокой старости, имѣть красивыхъ, здоровыхъ дѣтей и не встрѣчаться съ тѣми семейными неудовольствіями, которыя отравляютъ брачную жизнь Составилъ докторъ медицины Н. Фернау, ц. 1 р. 50 к. съ пересылкой.

О зачатіи и зарожденіи младенца, объ укрѣпленіи ослабѣвшихъ мужскихъ членовъ, и объ излѣченіи отъ онанизма какъ мужчинъ, такъ и женщинъ, сочиненіе полезное и понятное для всякаго, кто желаетъ вполнѣ постигнуть эти важные предметы. Сочиненіе доктора медицины и профессора парижскаго университета Мореля де Рюбомира, изд. 3-е, ц. 1 р. 50 к,

Сладострастіе и истощеніе, общественное изложеніе всѣхъ средствъ для совершеннаго излѣченія венерической болѣзни во всѣхъ ея видахъ и проявленіяхъ, возстановленіе плодородія, лѣченія безсилія и безплодія, возрожденіе утраченныхъ физическихъ силъ, съ привосокупленіемъ рецептовъ лѣкарствъ для домашняго приготовленія. Составилъ докторъ медицины П. Сорокинъ, въ 2-хъ част., изд 2-е, ц 3 р. съ пересылкой.

Врачъ совѣтникъ и руководитель для супруговъ и вообщее для молодыхъ людей. содержащій въ себѣ анатомическое описаніе мужскихъ и женскихъ производительныхъ частей, ихъ развитія, предназначеніе и сообразнаго съ природою измѣненія и исполненіе половыхъ отправленій, брачная жизнь, любовь внѣ брака, не совершенное приготовленіе семени, безсиліе и безплодіе, разслабленіе нервъ, бѣли, неправильныя мѣсячныя очищенія и полюціи, с показаніемъ средствъ къ отвращенію этихъ недуговъ и къ сохраненію производительной силы до глубокой старости, а также къ уничтоженію гибельныхъ послѣдствій онанизма и къ доставленію истощившимъ себя этимъ порокомъ прежняго цвѣтущаго здоровья. Составилъ докторъ медицины Ф. Вейсъ, ц. р. съ пересылкой.

О дѣйствіяхъ природы въ произведеніи рода человѣческаго или стремленіи одного пола къ другому, об оплодотвореніи, зачатіи, зарожденіи и сохраненіи младенцевъ, для произведенія на свѣтъ здоровыхъ дѣтей и для сохраненія собственныхъ силъ и здоровья, съ показаніемъ безвредныхъ, испытанныхъ средствъ къ укрѣпленію ослабѣвшихъ мужскихъ органовъ, перев съ нѣмецкаго докт Кужилевича. изд. 2-е ц 2 р. съ пересылк.

Грамматика супружская, секреты для женщинъ и мужчинъ, составилъ Н. Гарусовъ, ц. 1 р. съ пересылк.

Исторія роковыхъ и гибельныхъ послѣдствій онанизма и неизбѣжнаго умопомѣшательства для тѣхъ лицъ, которыя предаются этой отвратительной страсти, если не оставятъ ее; книга какъ другъ и спаситель взрослыхъ, дѣтей и юношества съ указаніемъ совѣтовъ и вѣрнѣйшихъ рецептовъ къ излѣченію этой болѣзни. Составилъ докторъ медицины К. Ф. Соколовъ, съ рисунками. изд. 2-е, ц. 2 р съ пересылк.

Съ требованіями этихъ книгъ Гг. иногородные благоволятъ обращаться исключительно на имя Христофора Ивановича Патрова, С.-Петербургъ, Стрѣльнинская улица, домъ № 10.

Требованія прошу адресовать болѣе четко, а именно не Петрову, а ПАТРОВУ.

1—1

Дозв. ценз. 24 Іюля 1893 г. Тифлисъ. Типографія Груз. Изд. Т—ва.